

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

55րդ ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

թիվ 10

29 ԱՊՐԻԼ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ Կոմիտեներուն շուրջը	• • • • •	Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՅԱՆ
Քերթուած Շէյխի (Դաքառ քարզմ.)	• • • • •	ՏԻԳՐԱՆ ԵԼՔԵՆՃԵԱՆ
ձամբու Յիւսէփէն — «Թաման»	• • • • •	ԼԵՐՄՈՆԴՈՎ
Օրուան Դեմքեր — Օրուան Դեմքեր	• • • • •	ՆՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ
Իրիկուան ձայներ (Բանաստեղծութիւն)	• • • • •	ՄԻՍԱԿ ՄԵՇԱՐԵՆՅ

Խմբագրական Նօթեր

ՄԱՍԻՍԻ ներկայ համարի «Օտար Դրականութեան» բաժինին մէջ հրատարակուած Ուղեւորական Տպագրութեանց շահեկան մէկ դրուագը — «Թաման» — իր ընդարձակութեանը պատճառով հարկադրեց Խմբագրութիւնս յետաձգել սովորական թերթօնը — «Յրանապէն Դրագիրի» — զոր պիտի շարունակենք յաջորդ թիւով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՆՍՏՆ Եաքաքաթրի սարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար քառսուն դրո. իսկ Երևանի համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Ֆրանկ կամ 5 ռուբլ. Զատարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւնը: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ Խմբագրութեան ամէն շաբաթ առտու:

Տպագրութեան ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Ձեռքի կը ծախուին ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضي اداره

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

3281871

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

1871-1872

Ծաղկաւոր թիւ

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելին դարձած է, տխրան բաղմամբիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն սմանք նշանաւոր են իբր տեսութեամբ եւ քաղցրաբոյր, սմանք ու թէեւ նոյնքան տեսութիւն համ ու հաշունին, գերազանց են սակայն իբր կաշուերի եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէլ իր ուրոյն յատկութիւններն ունի որոնք զինքը կը զանազանեն ուրիշ տեսակներէ:



Սակայն կայ թէլ մը, որ այդ յատկութեանց մմէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ դոյն համ հաւ մանաւանդ կաշուերի եւ զօրացուցիչ անգուշական ազդեցութիւն մը, եւ այդ թէլն է ճաբոցի քէլը, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Յազարուեաց եւ Իսազուլեաց քէլի մեծ վաճառատունը, իր բաղմամբիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս տեսքով մեծաքանակ ներածած է հարսնական զուտ թէլ մասնաւոր եւ բնական մուգեղան ու կը հրաւիրէ օգտուիլ այս առիթէն բոլոր տանք, որ կը փափաքին ունենալ թէլ մը՝ Համով, հոտով, անողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, ինտական, Սէյլան եւ ճովալի տանաւաւ տեսակ թէլեր:

10—10

Ուսազարութիւն մաքրայի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբուժ եւ կնիքաւորան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարեւան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յարգայ յաճախորդներուն թէ ընկալաւոր փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18, Բաց ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթոաներով ջղային եւ հոգեկան ու երեւակայական ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի երեւի եւ ուտեբու աչքի եւ սկզբնային արժանիները եւ դաշտանի դադարումէ շուտջ եկած ջղային խռովումները եւ հրիտաւարդական մալիքները, ինչպէս նաեւ գինեմալիքը, մօրիֆնամալիքը եւալլին, Կիրակիներէն զատ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ սուրբօր օրերը ճիշդաբար կը դարձանէ վկայեալ աղքատները: 10—10

ԱՐՐԱՀԱՄ ԿՏԱԻՃԵԱՆ

(Ն Ի Կ Ո Մ Ի Դ Ի Ա)

ԿԸ ՍՏԱՆՁՆԷ՝ ազատագրութիւններ, ամէն տեսակ գոմիտիօնի դարձեր, առեւտրակալ դարձերու վերաբերեալ ազադական յանձնարարութիւնք՝ Կ. Պալատ, մէջ պատրաստելի, քառթաղկիթ եւայլն:

ԿԸ ՀՅՅԹ՝ ԿՏԹԷ՝ ամառկան զմարումով՝ Սաքսոնիայ դաշնակներ, անգլիական տան հաւն դրամարկներ, պիտիքէթներ եւալլին: Ուղուած քանակութեամբ եւ տեսակով ընտիր ու հրաւեր թէլեր:

Շրջակայ գաւառակներու առեւտրական յանձնարարութիւնք եւս կը կատարուին փութով:

4—10

Հասցէ

ԱՐՐԱՀԱՄ ԿՏԱԻՃԵԱՆ—ԻՋՄԻՏ

ԱՅՐ, ԿԻՆ, ՏՂԱՅ

Մարդս տենդի հիւանդութենէ վերջը տկար կը մնայ, մանաւանդ տղայ մը: Ինչպէստէ հարկ չիտեսնուի, հիւանդին պէտք է տալ



Ընչերու վրայ ասոր ուշա-
դրութիւն ընել պէտք է:

SCOTT'S EMULSION

և տկարութիւնը անմիջապէս և վստահափար կը փարատէ
և կը տեսնուի որ

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ

մարմինը պատող բոլոր տկարութիւններու դեմ
ամենամեծ դեղ է: Երեքական տակ ասոր հաւասար
բան մը չիկայ. այնպէս կատարեալ կը բժշկէ որ կը
կարծուի թէ հիւանդութիւնը կուտէ ու կը կլլէ:

Բոլոր բեղունութիւնները և բեղունութիւնները և ծնին:

18

PHOENIX ASSURANCE Ld. Co.

“ՖԻՆԻՔՍ,”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1782 ԻՆ

ՅԵ ԳՈՐԾԷ Ի ՊՈԼԻՍ 1869 ԵՆ Ի ՎԵՐ

ԼՈՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ և պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս առկ հրդեհի դէմ Ապահո-
վագրեալ Ընկերութիւն մըն է, ծանօթ
էր պատահականութեամբ և վնասուց մէջ
էր անմիջական վնասումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի և
կայծակի դէմ մէկն առաջ անշարժ և

չարժուէն առաջաւորք, յայտնաբերուող
գումարներով:

Ընկերութեան նշանաբանն հղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ և ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Ցաւք վնա-
րած է առաւել քան 27,000,000 անգլ.
ֆունտ:

Ընդհ. գործակալ Պոլսոյ և գաւա-
ռաց: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վիքայիս խան, Պանֆ Օթոմանի մօտ
Ղալաթիս:

Փոխ գործակալ Ի Պոլսոյ

ՃիւղԱՆ ԹԷՔԷՆԱՆ

10-10 Գնացիւն խան

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ԳՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալածա-Սէրայի Լիսէին դէմ

Դե. Սե. Շք. օրերը առաւօտեան կանու.

խեն մինչեւ իրիկուան ժ. 11½

Բե. Դե. Ուր. օրերը 6հն մինչեւ 11½

Կիլիկի օրերը ժամադրութեամբ 10-10

ԱՄԱՆԻ

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 10

29 ԱՊՐԻԼ 1906

ԴԱՐՁԵԱԼ ԿՈՆԲՈՒՆԵՐՈՒՆ ԹՈՒՐՋԸ

Իր Թարգմանութեան մասին եղած քննադատութեանց դէմ իբրեւ պատասխան երկնադատութեամբ ներկայացուցած մի քանի նենգախառն կցկտուր ու փախստեայ առարկութեանց մէջ, Գր. Մալխաս էֆէնտի, իբրեւ թէ հեզնելով Կոնգուռներու արուեստին նկատմամբ մեր յայտնած մէկ կարծիքը, կ'ըսէ. «Լեռներ կը բաժնեն Կոնգուռները Յիւսպէտէ, ներդաշնակութեան մասին, Շաթոպոնի, Լամաթիին, Յիւսպէտի ներդաշնակութիւնը ո՛ւր... Կոնգուռներու բառերուն հնչունութիւնը ո՛ւր...»: Մեր կարծիքն ալ սա՛պէս կը բանաձևէ. «Ձգալութեանց խտացում, ձայներու համերգութիւն, բառերու հնչունութիւն և ներդաշնակութիւն (1), ասոնց մէջ Կոնգուռները՝ Յիւսպէտէ անդին տարին իրենց մտահոգութիւնը...», ու կը յաւելու ծաղրօրէն «նասկըցած, Յիւսպէտէ անդին...»: Մենք գրած էինք. «Ո՛րչափ տարբերութիւն ասոնց (Պալաքի և Զօլայի) և Կոնգուռներուն մէջ՝ այն խղճամիտ, արտահաստադէտ ու նրբաշխատ ձիւզին տեսակէտով՝ որով նկարչագէտ-գրագէտ եղբայրները կ'արուեստակերտէին իրենց ոճը ու զայն գոյներու ճշգրտահան պատկեր մը, զգայութեանց խտացում մը ու ձայներու համերգութիւն մ'ընելու տանջող ու դժուարահան փոթն ունէին, բառերուն հնչունութեան ու ներդաշնակութեան ու խօսքին ոսկերչական ընդելուզման մտահոգութիւնը Յիւսպէտէն ալ աւելի հեռուն տանելով...»:

Ինչպէս կը տեսնուի, մեր խօսքին վերջին մասին մէջ մտահոգութիւնը՝ զոր Յիւսպէտէն աւելի հեռուն մղուած համարած ենք Կոնգուռներու գործին մէջ, «Դեռահաս Միջակորեար»ի Թարգմանիչը կ'ընդլայնէ նաև

զգայութեանց խտացման և ձայներու համերգութեան, ու իր հեզնութեամբը կ'երևի չընդունիլ այդ ամէնը: Իրեն համար, ո՛չ, Կոնգուռները ո՛չ բառերու հնչունութեան և ներդաշնակութեան, ո՛չ ձայներու համերգութեան, և ո՛չ զգայութեանց խտացման մասին չե՛ն աւելի յառաջ տանիր իրենց մտահոգութիւնը քան զՅիւսպէտ: Մանաւանդ, իրեն համար, այն հեղինակները, որոց գործին ու արուեստին վրայ ա՛յնքան հիացող է, ներդաշնակութեան գլխովին անփոյթ ու անսիրող են. անոնք աչք ունին միայն տեսնելու համար, և «երբ իրենց աչքը կ'զբաղի առարկայով մը, երբ իրենց տեսութիւնը կ'իյնայ տեսարանի մը վրայ, իրենց ականջները չեն գործեր... երաժիշտ չեն...»: Թարգմանիչը կը թուի չափազանցած ըլլալ ժիւլը Մէդր քննադատին — որուն հետեւող է իր ուսումնասիրութեան մէջ — ինչ ինչ կարծիքները Կոնգուռներու ոճին նկատմամբ, և ինչ որ սա վերապահմամբ և սահմանափակ կերպով մը կ'ըսէ՝ ինքը կ'առնու լայնօրէն ու բացարձակօրէն: Զոր օրինակ, երբ ժիւլը Մէդր զգուշօրէն կը գրէ, «Ինչ որ ունին վերադրօրէն (par surcroît) է, կերպով մը (*) բանակերտութեան (phrase) արհամարհանքը, բարեձայնութեան, չափականութեան, չարադատութեան իճի իճի փոքր կանոններու անգոյնումը, կը յիշեցնեմ որ ի նկատի ունիմ մանաւանդ Մանեղ Սալոմօնը և Մոսամ Ժեռ.վեգէն», Թարգմանիչը կը հասկնայ որ միշտ և ամենուրեք «Կոնգուռներուն ոճը բոլորովին ու բացարձակօրէն զուրկ է երաժշտական յատկութենէն»:

Բայց այդ բացարձակ զրկումը երաժշտ-

(*) Ես կ'ստորագծեմ:

տական յատկութենէ», բացարձակ դատապարտութիւնն է Կոնգուռեան ոճին: Ո՛ր և է գրական ոճի անհրաժեշտ մէկ հանգամանքն է ներդաշնակութիւնը: Անդուան Ալպալա «Գրելու արուեստ»ին մէջ կ'ըսէ. «Սկզբունքով, ներդաշնակութիւնը լաւ ոճի մը մասն կը կազմէ: Բոլոր մեծ մատենագիրները հետամուտ եղած են անոր. անոնք իսկ որք կը ծաղրեն զայն՝ չեն հրաժարիր անկէ, և իրենց գործոց մէն մի էջին վրայ կը գտնուին օրինակներ չափակցեալ պարբերութիւններու, բառից հաճելի միաւորութիւններու, վանկերու ողորձիչ հնչիւններու»: Ներդաշնակութենէ գլխովին զուրկ գրուած մը անտանելի ու անընթեռնելի կը դառնայ, ու, հակառակ իր հնութեանը, միշտ ճշմարտութիւն մ'է Պոալոյի խօսքը.

... La plus noble pensée
Ne peut plaire à l'esprit quand l'oreille est blessée.

Անշուշտ ներդաշնակութիւնը խօսքին լաւութեան միակ պայմանը չէ, պէտք է որ անոր հետ միանան իմաստներու ճշգրտութիւն ու գեղեցկութիւն, բառից ու ոճերու հարադատութիւն, լեզուի յատկութիւն ու մաքրութիւն, և, ու ներելի չէ որ այս յատկութիւնք զոհուին բառերուն կամ պարբերութեանց ներդաշնակութեան. բայց ի հարկէ երբ ճիշդ, հարադատ, մաքուր ու իմաստալից ըլլալուն հետ ի միասին՝ գրուած մը ներդաշնակ է նաև, բնաւ երբեք արհամարհելի յատկութիւն մը չէ: Ի հարկէ ներդաշնակութիւնը միշտ բառերու ձայնին ամօք քաղցրութիւնը չի նշանակեր. է նա մանաւանդ սահուն, անարգել և հեշտին գնացքը խօսքին, լաւ կ'ըսած ու շնչառութեան պահանջները գոհացնող արոհումներով. խստահընչիւն ու խորթ բառերն ալ որք իմաստներուն պատշաճօրէն կը պատասխանեն ու իբր ձայնով կը նկարեն զանոնք, մասնաւոր ներդաշնակութիւն մը յառաջ կը բերեն ու հաճոյ են մտքին: Ականջէ զուրկ հոշակել մատենագիր մը՝ ուրանալ է անոր մատենագրական տաղանդը. ինչպէս գիտնոյն, նոյնպէս և գրագիտին անհրաժեշտ է իր զգայարանաց ամբողջութիւնը, և մանաւանդ ի՞նչպէս կըրնանք զլանալ ականջը այնպիսի հեղինակներու որոց գլխաւոր արժանիք կ'ընծայենք.

զգայութեանց ճշգրիտ բացատրութիւնը: Իբր թէ Կոնգուռեանը միայն գծեր ու գոյներ ու ձեւեր բառերով նկարելու մէջ ճարտար ըլլային իբրև նկարիչ-գրագէտ, իսկ ձայներու տպաւորութեանց անտարբեր, բայց այն ատեն պէտք էր որ նկարի մնային, զի առանց ականջի կարենային թերևս լաւ նկարիչներ ըլլալ, բայց ո՛չ լաւ գրագէտներ, զի գրագիտութիւնը խօսքի ու ձայնի արուեստ է: Սակայն անհրաւելութիւն է ըսել թէ Կոնգուռեանը իրենց նկարագրութեանց մէջ զանց ըրած են ձայնական զգայութիւններն, ստուերէ, լոյսէ, գոյնէ, շարժումէ միայն ազդուելով ու այդ ազդումները միայն բացատրելով: Հետեւեալ հատուածը. զոր կը թարգմանեմ իրենց առաջին վէպէն (En 18***) և որ մասն է էջի մը զոր ժիւլ Ժանէն դիւթիլ էջ մը կոչած է՝ արժանի առանձին չրջանակով մը կախուելու Ժիւլ Տիւբուէի մէկ գիւղանկարին քով՝ ի հանդէս կը բերէ զգայութիւններ միանգամայն տեսողութեան, լսողութեան, հոտոտելեաց գործարաններով ստացուած. «Արևը մի առ մի կը վառէ տերեւոց յետին զմրուխտները, և, կանաչութեան մթին կոյտերուն մէջ մխրճելով, զանոնք թափանցկութեամբ կը տոգորէ, և միայն մէկ ստուերոտ բացուածք կը թողու կղզւոյն եզրը նստած դալար ուռեստանին մէջ: Գետակը կը խոխովէ. միջատներուն բզդիւնը, ծղրղին անդուլ սղոխ սղոխ, բարձրադիտակ կաղամախներուն մէջ թեւերու խուլ բաբախին. ներ, հեռաւոր երգերու խեղդուած խաղեր, հծծիւններ սերմերու որք դէպ ի կեանքը կը նետուին, ուրախ և ճարճատուն, լռութիւնը կը լեցնեն այն մրմնջածայն ովսանայով զոր գեղեցիկ օր մը կ'երգէ:—Մերթ ընդ մերթ, անշունչ սղոխ մը կը սպրդի սաղարթներուն մէջ. տարփոտ ճիւղերը իրարու վրայ կը չրջեն իրենց տերեւները որք կ'արծաթագօծուին: Եղէգները կը խոնարհին և գետակին երկայնքը կը ծածանեցնեն իրենց դալար կամարները. ջուրը կը սարսուռ և աղաժան դային վէտվէտումներով կը կնճռոտի: Իբր թափանցող ու տարտամ հոտեր, ջրային

տունկերու բոլոր այն անանուն անուշահոտութիւնը օգին մէջ կը ծփայ իբրեւ խունկ մ'աներեակ: Հեռաւորին մէջ կորսուած վարուժան մը երկարածիդ վուվու մը կը հառաչէ: Ձինքը բանտող կեղեւին տակ կը մրմնջէ հիւթը ծառերուն. ծաղկանց սերմնափոշին կ'իջնէ նուազեալ բոյսերուն վրայ. մագնիսական հոսանք դուրս կ'ելնեն ջուրէն, անտառներէն, ծաղիկներէն. տաք գինովութիւն մը կը բոցակեզէ արարչութիւնը. տիեզերական բնութիւնը սիրոյ վրայ կը խօսի ինքզինքին և, միջօրէի տարփաւառ համայնքներուն տակ տրոփուն, կը յուզի: Բայց ի տեսողական տպաւորութիւններէ՝ այս հատուածին մէջ կը տեսնուին տպաւորութիւններ լսելեաց ու հոտոտելեաց զգայարանքներով ստացուած, և ընթերցողը կրնայ թարգմանութեանս մէջէն զգալ նաև ներդաշնակ կազմութիւնը խօսքերուն, վասնզի մեր թարգմանութիւնը ոտն առ ոտն հետեւած է բնագրին, և եթէ հայերէնը ունի թուականութիւն մը և դաշնակաւոր թրթռում մը, վստահ պէտք է ըլլալ որ գաղիքներէն աւելի ևս ունի, վասն զի աւելի ևս քան զհայերէնէն գաղիքներէն հնչուն է ու թրթռուն: Բայց չեմ վարանիր առ այդ նոյն ինքն բնագրական հատուած մը յառաջ բերել, Charles Demaillyէն, հորիզոնական գծերով նշանակելով այն փոքրիկ դադարները (pause) որք խօսքին ոտքերն են ու գրեթէ համաչափ քալերով երած շտական թուականութիւն մ'ի վեր կը հանեն. — «Tout inspirait donc — pour la fortune — du petit journal. — Il fut tout ce qu'il voulut être, un succès, — une mode, — une bonne affaire. — Il eut des registres — qui ressemblaient — à la fosse commune, — tous les abonnés s'y pressaient. — Il fut crié sur les boulevards, — épelé par les cafés, — récitée par les femmes, — lu en province. — Le produit de ses annonces — suffit à faire ses rédacteurs — gras comme des chanoines — et bardés de louis. — devant lui, tous tremblaient, — l'auteur pour son livre, — le musicien pour son opéra, — le peintre pour sa toile, — le sculpteur pour son marbre, — l'éditeur pour son

annonce, — le vaudevilliste pour son esprit, — le théâtre pour sa recette, — l'actrice pour sa jeunesse, ...»: Եւ այսքան երած շտականօրէն կտրատուած, գրեթէ համաչափուած տողերու առջև ըսել թէ կոնգուսները անփոյթ են ներդաշնակութեան, ու ծաղրաբանել զանոնք որք «դաշն» են գտեր անոնց գրութիւնը: Արդարեւ ես կը նախընտրեմ Յ. Տէր Յակոբեանի ականջները քան զՄալխասին, և արդէն յայտնի է որ առաջինը շատ աւելի գրագիտական խմոր ունի քան վերջինը: Կոնգուսները կրնան ներդաշնակութիւնը ստորադասած ըլլալ զգայութեանց ճշգրիտ բացատրութեան, ինչպէս մի ոմն քերականական ճշդութիւնը, ուրիշ մը բառերուն հարազատութիւնը ի վեր պիտի դնէր ներդաշնակութենէն, բայց այս ըսել չէ թէ ներդաշնակութեան «կատարեալ արհամարհանքը» ունին, և յատկապէս, դիտմամբ, դրութեամբ, նոյն իսկ երբ բացատրութեան ճշդութեան հոգը զիրենք չիստիպեր զանց ընելու ականջին պահանջումները: Ո՛րքան անոյշ տողեր կան այս մարդոց գլուխածներուն մէջ որք ա՛յնքան զգայուն են, և ա՛յնքան քաջ դիտեն բացատրել սրտի փափկութիւններ, զգացման նրբութիւններ, ու ա՛յնքան արտասուաշարժ քնքոյշ պատկերներ են գծած: Օրինակ մը, մին խիստ յատերէն, ուր Ռենէի հոգեվարձութիւնը նկարագրելով, կ'ըսեն «Պայծառակերպութիւնն էր այդ սրտի այն հիւանդութեանց որք օրհասական աղջիկները իրենց հոգւոյն գեղեցկութեան մէջ կը պատանքեն ու վաղամեռիկ կոյսերուն դէմքը երկինք կ'առնուն կը տանին.» հատուած մը որուն մէջ transfiguration բառին (պայծառակերպութիւն կամ ալլակերպութիւն) թարգմանչէն կերպարացափոխութիւն (իբրեւ թէ transformation ըլլար) բառով սխալ թարգմանումը հայերէնին մէջ ջնջած է խօսքին բոլոր հրապոյրը: Բնական ջանք մ'է որով գրագէտը կը ջանայ գաղափարն ու ձեւը ներդաշնակել, համապատասխան ընել իրարու. «Որչափ աւելի գաղափարը գեղեցիկ է, ա՛յնչափ աւելի հնչուն է խօս»

քը, վստահ եղէք» կ'ըսէր Յիւզէն, որ ան-
անջատ կը նկատէր գաղափարն ու ձեւը,
ինչպէս հոգի և մարմին: Խօսելով հիւանդ-
ներուն այն զգացման վրայ որով կ'ըղձան
փոխադրուիլ հին յիշատակներով լեցուն սի-
րելի վայր մը, գիւղ մը, ու կը հաւատան
թէ այդ փոխադրութիւնը առողջարար պի-
տի ըլլայ իրենց, Կոնգուռ Եղբարք «Ռը-
նէ Մօրբուէն»ի (կամ Դեռ. Միջափոխարի)
46րդ գլխուն սկիզբը կ'ըսեն քնքօրէն,
«Ինչպէս մանկային վախեր դայեակի մը թեւե-
րուն մէջ կ'ապաստանին, ա'յսպէս իրենց յոյ-
սեր կ'ապաստանին դաշտավայրի մը պարտիզի
մը, գիւղի մը մէջ որ իրենց ծնիլը տեսած
է և որ չպիտի թողուր որ իրենք մեռնէին»:

Դժբաղդաբար, հոս դարձեալ ձախող թարգ-
մանութիւն մը բնագրին գեղեցիկ իմաստը
կեղծած է, վստահ բնագրին «comme des
peurs d'enfant dans les bras d'une nour-
rice, leurs espérances se sauvent dans
une campagne...» խօսքը թարգմանիչը
աղաւաղած է սա'պէս թարգմանելով՝
«Դայեակի մը բազկացը մէջ հանգչող ման-
կիկներու վախերուն պէս, անոնց յոյսերն ալ
կը փախչին կ'երթան ևն», չըբռնելով թէ
des peurs d'enfantէն յետոյ լռելեայն կ'ի-
մացուի պարբերութեան յաջորդ անդամին
մէջ եկած se sauvent բայը:

Մեր «համերգութիւն»ը եթէ կը հեզնէ
Մալխաս էֆէնտին, է'ր Զօլայի «նուագա-
ցութիւնը» (symphonie) մեր առջեւ կը դնէ
իրրեւ իր հաւնած մէկ դատաստանը Կոնգուռ-
ներու ոճի մասին, համերգութիւնը նոյնը չէ՝
նուագակցութեան հետ ու լաւագոյն քան
դայն, «Յիւզէնէն անդին...» ծաղրօրէն կը
բացագանչէ, կրկնելով մեր բառը. Ինչ պի-
տի ըսէր ուրեմն Կոնգուռներու «Հատընաթի
էջերը» հրատարակող Կիւսդավ Դուտուզի
Յառաջաբանին մէջ տեսնուած սա խօսքին.
«Ինչ որ կրնար գոհացնել այն յաւիտենա-
կան անգոհը որ Յիւզէնէն էր, երբ գտած
էր իր տաժանօրէն փնտռած խօսքի ձեւը,
չպիտի կրնար թերեւս գոհացնել Կոնգուռ-
ները, զորս արուեստի դեւը կը մղէր ամէն
բան բացատրել տալ ուղեւոր իրենց մատե-
նից էջերուն, որոց մէջ փորձած են բանտել
միանգամայն զգայութեանց աշխարհը, գոյ-
ներուն աշխարհը եւ գաղափարներուն աշխար-
հը» Դարձեալ նոյն քննադատն է որ կը գրէ

խօսելով Կոնգուռներուն համառաւար «ար-
ուեստագիտական գրութեան կերպին» (écriture
artiste) վրայ. «Միայն ճշգրիտ բառին,
ճիշդ վերադիրին, հնչուն, անթերի, ա-
ռանց կրկնութեան, առանց ծանրացման,
խօսքին չարչարանքը չէ այն որ Կիւսդավ
Յիւզէնը կը տանջէր. չէ այն միայն նոր,
չգործածուած ու գունազեղ բառին մաս-
նաւոր հետաքրքրութիւնը, չքնաղ պատ-
ուական քարերու ընդհուդիչ գոհարագոր-
ծին մտահոգութիւնը՝ որ կը նեղէր Թէօֆիլ
Կոշիէն. չէ՝ այն հնօրեայ բառին ան-
յոյզ հետամտութիւնը որ կ'առաջնորդէր
Լըգոնդ տը Լիլը, — բայց աւելի ու շատ
տարբեր բան մը, անյադ տենչ մը իրենց
գործոց մէջ պարփակելու բոլոր յուզումը
զոր կ'զգան գրողներ որք միեւնոյն ատեն
գծագրութեան, ջրաներկի բոլոր նրբութեանց,
ժանտաջրով փորագրութեան բոլոր խած-
ուածներուն վարժ արուեստագէտներ էին,
գրագէտներ ըլլալէ՝ առաջ նկարիչներ եւ
փորագրիչներ» Ու, ցուցնել ուղեւոր որ
Կոնգուռներու արձակը մերթ կը բարձրա-
նայ ամենամաքուր բանաստեղծութեան, կը
չնչուէ, այդ պարագային մէջ, ի բացակա-
յութեան բուն տաղաչափական արուեստին,
այդ արձակին ստացած թուականութիւնը
(rythme), բարձրութիւնը, համաչափութիւնը
(cadence) եւ երաժշտական թրթռումը
(vibration musicale): Ըսել է թէ այդ ե-
րաժշտական յատկութիւնները օտար չեն ե-
ղեր Կոնգուռներու արուեստին, որուն Գր.
Մալխաս էֆէնտի այնպէս անողորմութեամբ
կը զլանայ զանոնք: Էտմոն ալ, այս գրա-
կան Սիւրմի-Եղբայրներուն երէցը, իրենց
Օրագրին մէջ կը յիշէ թէ Ժիւլին մահուան
յաջորդ օրը առ Զօլա գրած նամակի մը
մէջ պատմած է Ժիւլին ոճի կատարելու-
թեան նկատմամբ ծայրայեղ նախանձախնդ-
րութիւնը, թէ Ինչպէս տարփոտ փոյթ մ'ու-
նէր ձեւին յարդարման, պարբերութեանց
քանդակագործութեան, բառից ընտրու-
թեան, ի միասին գրուած եւ նախապէս
գոհացուցիչ երեւցած կտորներու վրայ կըր-
կին ժամերով աշխատելով, հո'ս վերադիր
մը փոխելով, հո'ն պարբերութեան մը մէջ
կշռութիւն մը (rythme) մտցնելով, աւելի
հեռուն ի նորոյ ձեւակերպելով խօսքի դար-
ձուած մը, եւայլն:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՆՅՐԷԿԸ ԵՐԿԻՐ ՄԱՍԵԱԼ Ի ՊԱՂ

Յուրտ ի վերուստ շողայր երկին,
Նիրհէր երկիր մածեալ ի պաղ,
Եւ գիշերոյ շունչ ցըրտագին
Յանհուն դաշտաց ձիւնախաղաղ

Հասանէր
Սարսուաբեր .

Թանձաւախոր սառանց փապից
Հանգոյն մահու մըրրկեալ ի վեր,
Սաստկամըռունչ հողմ ցըրտակիծ
Առ հիւժեւով լուսնով քերէր :

Մածկեալ ծրարեալ բոյսք, դեղ դալար,
Արջն երեւէր ցանկ մացառուտ,
Ըղմերկ լանջօք եղճաց դադար
Թըռչնոց առեալ հոյլք թըփամուտ .

Տատասկին
Սողոսկին

Խառնախըռիւ թաւուտք յերկիր
Ընդ խորխուրեալ չաւիղս ուղեաց,
Որոց փոսիցն արկանէ լիր
Եղեամբն ցուրտ համատարած :

Անդ փայլէին աչք քո միայն,
Ո՛վ սիրելիդ, ի նշոյլ աղօտ
Մահամերձիկ լուսնոյն փայլման,
Որ՝ ի ճահճի դերդ լոյս դալկոտ

Երբրի
Գիշերի,

Հեղոյր նըւաղ տըխուր շողիւն,
Եւ հերք վարսից քոց դեղնէին
Ի շիջանուտն ի լոյս տըմոյն՝
Ծըփեալք ի հողմ գիշերային :

Լուսնով չըրթունքդ էին դունատ,
Ի ցուրտ հողմոյ ծոց քո սարսուէր,
Ի ցանկալին ի քո ճակատ
Ծող ցըրտագոյն ցօղէր գիշեր,

Դու կայիր
Անյարիր

Տարածեալ անդ գետնախըշտի,
Ուր հողմն անդարդ երկնից, եղո՛ւկ,
Ելանէր յայց քեզ ի դաշտի,
Հողմ դառնալունչ մահաշըշուկ :

ԵԵԼԼԻ

Թարգմ. յանգլիապահե
ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԱՆ

ՕՐՈՒԱՆ ԴԵՄՔԵՐ

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐ

(ՍՐԵԱՆՅԱՆՆԵՐԸ)

Նահապետան գերդաստան մը, quoi?

Երկու քոյր, երեք եղբայր. — հայրիկը՝

հինաւուրց օրերու երաժիշտ-երգահանի հանրածանօթ դէմք՝ կը զարնէ դաշնակ, ջութակ... քանոն, առմոնիկ. օրիորդներէն մէկը՝ դաշնակ, միւսը՝ Օր. Վերոնիկ՝ նորէն դաշնակ, Յարութիւն Սինանեան՝ դաշնակ, ջութակ, մինչեւ իսկ... Թմրուկ. Անտոն Սինանեան՝ նմանապէս. իսկ Յովսէփ Սինանեանի Թաւջութակը՝ լալկան սիրահարի հոգեցունց հառաչանքներ կ'արձակէ իր երկու սրունքներուն մէջտեղէն. հապա մայրիկը, պիտի հարցնէք. ան ալ մտիկ կ'ընէ իր զակերներուն նուագահանդէսը:

Bien entendu, գերազանցապէս համայնքային դէմք մըն է Յարութիւն, երիտասարդ վարպետ մը տանըհինգ տարիէ ի վեր, որ վաղը Օտէնի բեմին վրայ պիտի երևի՝ համակրութեան ու ջերմ ծափերու տաք մթնոլորտէ մը շրջապատուած՝ առաջին անգամ ըլլալով Պոլսոյ մէջ հրապարակաւ և փայլուն կերպով փայլեցնելու համար իր տաղանդը, — դաշնակահարի տաղանդը, — ի վեր հանելով նաև տաղանդները իր քրոջ ու եղբայրներուն, որոնք իր աշակերտներն են միշտ:

Արթիւնը... ո՛վ չի ճանչնար զայն. — արուեստագէտի խոհուն գլուխ մը՝ քիչ մը դէպի առաջ հակած, յոգնածի երեւոյթ մը դիմագիծերուն վրայ, յափաղացած ծափերէ, գնահատումներէ ու յաջողութիւններէ. Թաղծոտ աչքեր՝ որոնք անտեսանելի ու անօշափելի ներդաշնակութիւն մը կը գգուեն կարծես և ականջները միշտ ակնդէտ լսելու նոր motif մը որ պիտի հնչէ յանկարծ, վալսի, բոլքայի, մելոտիի motif մը՝ զոր անմիջապէս պիտի նօթագրէ գծաւոր Թուղթերուն վրայ:

Բաւական տարիներէ ի վեր քաշուած էր մէկդի՝ իր ճանճարացող արուեստագէտի քրքմայքները պտտցնելով իզմիր, Եգիպտոս ու Բարիդ. բայց յանկարծ օրին մէկը զինքը կը տեսնենք Ղալաթիոյ ժամը, եռաձայն պատարագի երգեհոնին առջև բազմած՝

տիրացուական եռանդէ մը վարակուած իր կարգին: Ու այսօր, կամ աւելի ճիշդ վաղը, նուագահանդէս մը կը սարքէ՝ իբր հեգնոտ պատասխան մը կարծես Ազգ. Հիւանդանոցի նուագահանդէսին յայտագրին:

Օր. Վերոնիք Սինանեանը... բանաստեղծներուն երգած գեղանի օրիորդը, բարակուկ, souple և svelte. մութ խարտեալ մազեր առա՛տ առա՛տ ժողվուած գլխուն վերև՝ շքեղ aureole մը կազմելով նորհալի դէմքին: Համեստ այնչափ որ կարծես ոչինչ գիտէ, բայց Վէպէռ և Սէն — Սանս հրճուանքով կը խայտան իր մատներուն տակ, ու նորէն ոչինչ կը զարնէ կարծես:

Անտոն Սինանեան... հասակ մը, հասակ մը որ կը բարձրանայ, կը բարձրանայ, ամպերուն մէջ կը կորսուի և նորէն չի վերջանար: — Զութակը մատներուն տակ կը խաղայ և մատները՝ ջութակին վրայ: — Բոլոր Պոլսերնակ դպրոցի աշակերտները որ ջութակ կը զարնեն՝ Անտոնին աշակերտներն են անպատճառ: — Անցեալ տարի «Թրամ»էն վար իջած ատենը ինկաւ ու առջևի գոյգ մը ակունքներ կոտորեցան:

Յովսէփ Սինանեան. — հասակ մը՝ 2 մեդր 50, արհեստով՝ ingénieur-mécanicien, իսկ արուեստով՝ վարպետ Թաւջութակահար, որ օրօրոցին մէջ անգամ Թաւջութակ կը զարնէր: Իր երկրաչափական արհեստին բերմունքովը ճամբորդած է աշխարհիս չորս կողմը՝ միշտ Թաւջութակը շալկած կռնովը: Վայելուչ ու բարեձև երիտասարդ — ամէն մեղքիս վրայ bachelier ès-lettres և ès-sciences, այլ երդուընցած ամուրի՝ կը յուսամ թէ կը հաճի ամուսնանալ, եթէ երբեք տասը հազար ոսկի (անգլ.) դրամօժիտով գեղանի օրիորդ մը գտնելու ըլլայ:

Հապա ինտո՞ր մոռնալ Սինանեաններու խոնջաքրանաթուրմ impresarioն՝ որ Սինանեաններու ստուերին տակ անգամ մըն ալ «օրուան մարդը» կը հանդիսանայ, մեր Սմբատը (տե՛ս Բէսէճեան):

Վաղուան նուագահանդէսին նիւթական յաջողութիւնը: — Բնականաբար Սմբատին հարցուցի.

— Իեղի անգամ նստելու տեղ չկայ, պատասխանեց մեր Ժրջան impresarioն:

ՆՐՈՒԱՆԴ ԹՕՂԱՅԱՆ

Ի ԽՐԵԿՈՒՄՆ ԶԱՅՆՆԵՐ

Կ'ալեկոծին տարփոտ ձայներն իրիկուան,
Յորձանքին մէջ յոգնակոհակ հովերուն.
Անրջածուփ, նըւաղ, բոյրերն երերուն,
Վերջալոյսին մէջ՝ ոսկեղօծ կը հեւան:

Ուրախութեան աղաղակներ հեշտալուր
Կը պլլըւին այդ ցնծածայն նըւագին.
Ու կ'անհետին՝ մէջն այդ ծրփուն յորձանքին՝
Հեշտերգութեանց թոյլ ծըւէններ կցկըտուր:

Զիլ գեղգեղներ ու նըւագներ վրդովիչ,
Ու ջութակի սարսուռին գիծը կարմիր...
Արեւմարքին ծաղիկն, որ չի՛ թարչամիր,
Ի՛նքն ալ գինով ըզգլխանքէն այս թովիչ:

Աղմըկահար սոյլն ու արշաւն հովերուն.
Հծծիւնները՝ ծաղիկներուն խատուտիկ,
Բարտիններու խարչալին ու ծափն հանդարտիկ,
Եւ համերգը խանդոտ՝ գետին մոլորուն:

Կըստուարանայ ալիքն հրճուոտ այս ճիւղին,
Ու կը բախի հողւոյս պորփուր քարափին,
Ու կ'ուռգէ զիս փրփուրին մէջ ծրփին
Երբ խնկազոյն լոյսերն ինձմէ՛ կը փախչին:

Արծաթ լոյսերն հիմակ տակաւ կը ծաղկին,
Ու կը ցայտէ թաւ հեծեծանքն «ուտ»երուն,
Լաղուարթ ժամեր լուսնի շիթ չիթ կաթիլքին
Մէջ կը թրթռան իրենց համբոյրն անանուն...:

Եւ հոգիներ կ'իյնան անոնց ծնրադիր,
Սիրերգութեանց ըմպած հըմայքն հըրեղէն.
Պայեր անոնց միսդիք ճամբան կը պեղեն,
Մինչ կը ցնծան լոյսով գէնիթ ու նատիր:

Ու կը բացուի փալփուլուն՝ գիշերն երջանիկ,
Արձագանգներ կը խաղան դեռ հոս ու հոն,
Քերթուած մըն է ցայգն համօրէն, ջի՛նջ գեղօն՝
Որ կ'երփներգէ ծափ ու ծիծաղ ու ծաղիկ:

ՀԻՒՍԻՍԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՃԱՄԲՈՒ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Թ. Ա. Մ. Ա. Ն.

Թուսիոյ բոլոր ծովեզերեայ քաղաքներու մէջ արդարեւ Թաման ամէնէն անասորո՞ն է։ Այս խեղճուկ տեսքով աւանին մէջ անօթի մնացի, և ինչ որ յոռեգոյնն է, հազիւ ազատեցայ խղճուելէ։ Իմ ուղեւորական յիշատակներուս մէջ անմոռանալի կը մնայ հոն անցուցած քանի մը օրերուս տըպաւորութիւնը որ կեանքիս տխուր մէկ դրուագն է։

Ուշ ատեն հասայ։ Կառապանը ուղեկառքիս ձիերը կեցուց մենաւոր տունի մը բակը։ Այդ միակ քարաշէն տունն էր որ կը բարձրանար քաղաքին մուտքին քովէն։ Սե ծովու խաղախներէն պահակ մը՝ կառքիս զանգակին ձայնը լսելով, պօռաց զօրաւոր ձայնով մը, որ նոր քունէն արթննալը կը մատնէր, թէ—«Ո՛վ է ան»։

Վերակացուն ու յիսնապետ մը դուրս ելան։

Ես անոնց հասկցուցի թէ սպայ մըն էի, և թէ գործօն ծառայութեան մէջ ըլլալով բնակարան մը ունենալու իրաւունք ունէի։ Յիսնապետը առջեւնիս ինկաւ ու բոլոր քաղաքը պատցուց զմեզ։ Շատ ծանօթներու հանդիպեցանք և ամէնքն ալ կը պատասխանէին թէ տեղ չկայ։ Օգը ցուրտ էր. արդէն երեք օրէ ի վեր աչքս չէի խփեր, և յոգնած՝ սրտնեղութենէս չգիտէի ինչ ընելու։

—Ո՛ւր կ'ուղեւ տար, կը կրկնէի, միայն պառկելու տեղ մը գտիր ինծի... Կուղեւ դժոխք տար։

—Հիւզ մը կայ թէև, պատասխանեց աւանջը քերելով, բայց... բայց կը վախնամ որ Ձեր Անուութեան դիրքին չարմարի... որովհետև չատ աղտոտ է։

Ա՛լ երկար չհարցափորձեցի, հրամայեցի որ անմիջապէս մեզ հոն տանի։ Բանի մը փողոցներէ անցա՛ք, ցեխոտ, նեղ, խեղճուկ

ցանկապատերով եզերուած, ու հիւղակը հասանք՝ որ ծովեզերքը կը գտնուէր։

Լիալուսնի լուսով՝ նոր բնակարանիս սպիտակ պատերն ու եղէգեայ տանիքը կը տեսնուէին։ Բակին մէջ, զոր խիճէ պատեր աւանի կողմէն կը գոցէին, երկրորդ հիւղակ մը կը բարձրանար որ առաջինէն աւելի հինկէկ ու պզտիկ էր։ Իսկ անմիջապէս անդին, ծովը՝ որ ընդմիջտ խրճիթին հիմերը կը թրջէր, իր ալիքներուն շարունակական չըփչըփոցները մրմնջելով։

Լուսինը հանդարտօրէն կը դիտէր վարի յուզուած տարրը. հեռուն, անոր ճառագայթներուն պայծառութեան մէջէն, սարդի ոստայնի մը նման, երկու նաւերուն սե կազմածները կը գծուէին տժգոյն երկինքի մը վրայ։ «Վաղը պիտի կրնամ մեկնիլ, կը մտածէի, խորսխուած նաւեր կան արդէն»։

Ուղախիս հրամայեցի որ պայուսակս վար առնէ ու կառապանը ճամբու դնէ։ Այդ խաղախը մասնաւորապէս ինծի կը ծառայէր. իսկ ես հիւղակին տէրը սկսայ կանչել. նախ պատասխան տուող չեղաւ։ Այն ատեն զարնել սկսայ... Նորէն ձայն հանող չեղաւ։ Վերջապէս տասնըչորս տարեկան տղայ մը գաւիթէն մագլցելով դուրս ելաւ։

—Ո՛ւր է տան տէրը։

—Տէր չունի։

—Ի՛նչ, տէր չունի։

—Ո՛չ։

—Տանտիրո՞ւհի։

—Գիւղ գացած է։

—Ո՛վ պիտի բանայ ուրիմն դուռը, պօռացի, ոտքովս դարնելով։

Դուռը ինքնիրեն բացուեցաւ և այն ատեն խոնաւութիւն մը զգացի։

Ծծումբէ լուցկի մը վառեցի ու տղուն դէմքին մօտեցուցի։ Այդ լոյսով ես նշմարեցի

րեցի թէ ան կոյր էր, ի ծնէ բոլորովին կոյր։ Անշարժ, ոտքի վրայ կեցած էր առջիս։ սկսայ իր դիմագծերը դիտել։

Էհ, կը խոտովանիմ թէ միշտ խորշում մը զգացած եմ կոյրերուն, չիւերուն, համարերուն, խուլերուն, ձեռնատներուն և կուզերուն դէմ։ Ինծի անանկ կուգայ թէ միշտ առնջութիւն մը կը գտնուի մարդու մը արտաքինին և ներքինին մէջ, իբր թէ այս կամ այն անդամին կորուստը ազդած ըլլար նաեւ անոր հոգիին։

Արդարեւ դիտեցի դեռատի կոյրին դէմքը... բայց ինչ կը հասկցուի լոկ դիմագծերէն, երբ հոն նայուածքը կը պակսի։ Արգաստանքի զգացում մը ծնաւ ներսս, երբ գրեթէ աննշմարելի ժպիտ մը խաղաց յանկարծ իր նիւար շրթունքներուն վրայ, տեսակ մը անախորժ զգացում պատճառելով ինծի։ Ինծի թուեցաւ թէ կեղծ կոյրը կը տեսնէր։ Թէև կ'ըսէի ինքնիրենս թէ կուրուրութեան արտաքին նշանները չեն կեղծուիր, և թէ ինչ շահ ատկեց, միւս կողմէն, դարձեալ կը կասկածէի։ Իմ մասին՝ այսպէս եմ։ Նախապաշարում մը յաճախ կը յաղթէ բանականութեանս։

— Այս տան տղան ես դուն, հարցուցի իրեն վերջապէս։

— Ոչ։

— Ուրեմն ո՞վ ես դուն։

— Խեղճ որը մը։

— Տանտիրուհին զաւակներ ո՞ւնի։

— Ոչ, աղջիկ մը միայն ունէր, բայց ան ալ փախաւ մէկուն հետ, ծովու ճամբով։

— Ո՞վ էր այդ առեւանգիչը։

— Ես ինչպէ՞ս կրնամ գիտնալ. Խրիմցի մը, Կէրջի նաւավարներէն մէկը։

Հիւզակին մէջ իբր կահ կարասի երկու նստարան, սեղան մը և մեծ սնտուկ մը կար վաւարանի մը քով։ Պատին վրայ նկար չէր տեսնուեր... ինչ որ լաւ նշան չէր։

Հովը որ ծովէն կը փչէր, սենեակը կը խուժէր կոտորտած ապակիներէն։

Ճրագ մը վառելով գոյքերս սկսայ կարգի դնել։ Կրպանս անկիւն մը զետեղեցի, իսկ առերհանգնեցի սեղանին վրայ։ Երբ ճամբորդի,

պուրկաս նստարանին վրայ փռեցի, խաղախա ալ իրը միւս սեղանին վրայ, և տասը վայրկեան ետք ան արդէն կը խորթար։ Եւ սակայն չքնացայ. ինծի կը թուէր թէ կոյրը շարունակ կը դառնար մութին մէջ, իմ առջիս։

Դրեթէ ժամ մը անցաւ այսպէս։ Լուսինը պատուհանէն ներս թափանցած էր և իր ճառագայթները հիւզակին հողէ գետնին վրայ կը խաղալին։ Յանկարծ գետնին լուսաւորուած մասին վրայ շուք մը գծուեցաւ։ Ես ելայ ու պատուհանէն շուրջս դիտեցի։ Անշուշտ մէկը անցաւ, բայց Աստուած գիտէ ուր պահուելիլը, ծովեզերքին կողմը չէր կրնար փախած ըլլալ, և սակայն՝ անկարելի ալ էր որ պահուրտած ըլլար. ո՛ւր պիտի պահուրտէր։ Ոտքի ելայ, թիկնոցս ուսիս վրայ նետեցի, դաշոյնս ձեռքս բռնեցի և ամենամեծ զգուշութիւնով տնակէն դուրս ելայ։ Դուրսը առաջին անգամ դեռատի կոյրին հանդիպեցայ։

Յանկապատին ետին սքողուեցայ և սպասեցի մինչեւ որ զգոյշ բայց հաստատ քոյլերով քովէս անցաւ ան, ծրար մը թեւին տակ, եւ յետոյ նեղ ուղիի մը երկայնքէն սահեցաւ նաւահանդիստին կողմը։

Այդ օրը, կ'ըսէի ինքնիրենս, համբերը պիտի խօսին ու կոյրերը պիտի տեսնեն։ Եւ մեծ զգուշութեամբ քալեցի, իր հետքը չկորսնցնելու համար։

Լուսինը տակաւ գոլորշիներով կը շրջապատուէր, եւ հեռուն, ծովէն բարձրացող մառախուղներուն մէջէն հազիւ կը տեսնուէր նաեւ մը յետսակողմի լապտերը. ալիքները ծովափը փրփուրով սպիտակեցուցած էին եւ կարծես վայրկեանէ վայրկեան կը սպառնային զայն կլլել։ Ես զառիվայրէն բաւական դժուարութեամբ իջայ ու սեպ ցցուածքի մը երկայնքէն քալեցի։ Կոյրը հոտ կեցած ու ծովափին աջ կողմը ձեռք առած էր։ Զուրին այնքան մօտէն կը քալէր որ կը կարծէի թէ հիմա ալիք մը զայն պիտի առնէ տանի, բայց յայտնի էր որ ինք չէր վախնար անոնցմէ, այնքան ճարպիկօրէն ժայռէ մը ուրիշ ժայռ կ'անցնէր, զգուշանալով միշտ

հեղեղատներէն ու գահավէժներէն : Վերջապէս կանգ առաւ . բան մը մտիկ կ'ընէր կարծես . յետոյ գետինը նստաւ ու ծրարը քովը դրաւ : Ծովափին դուրս ելած մէկ մասին ետին պահուըտած՝ ես բոլոր այս շարժումները կը դիտէի : Բանի մը վայրկեան ետք սպիտակ կերպարանք մը երեւցաւ . հակառակ կողմէն , եւ կոյրին մօտենալով նստաւ քովը : Հովը իրենց խօսակցութիւնը ինծի կը բերէր :

— Ի՛նչ մըրիկ , Աստուած իմ , ըսաւ կնոջ մը ձայնը , Եանքօ չպիտի կրնայ գալ :

— Եանքօ մըրիկէն չվախնար , պատասխանեց կոյրը :

— Մուշն ալ երթալով կը խտանայ , շարունակեց կինը վշտաբեկ ձայնով մը :

— Աւելի՛ աղէկ . մշուշին շնորհիւ մարդ աւելի ապահով կ'անցնի նաւերուն քովէն :

— Եւ եթէ խեղդուի :

— Այն ատեն կիրակի շուրժապաւէն չպիտի ունենաս եկեղեցի երթալու համար :

Վայրկեան մը լռեցին . այս ամէնուն մէջ ինչ որ է՛ն աւելի զարմանալի թուեցաւ՝ սա էր որ կոյրը ինծի հետ Փռքը—Ռուսիոյ գաւառաբարձառով խօսած էր , մինչ հիմա մաքուր ռուսներէնով մը կը խօսէր :

— Հիմա տեսա՞ր որ ճիշդ ըսեր եմ , շարունակեց կոյրը ձեռքները իրարու զարնելով . Եանքօն ծովէն , հովէն , մշուշէն չվախնար . . . ականջ տո՛ւր . . . ջուրը ասանկ աղմուկ չհաներ , ա՛նպատճառ իր երկար թիւերն են որ ալիքները կը ձեղքեն :

Կինը աշխուժութեամբ ցատկեց տեղէն ու սկսաւ դիտել հեռուն՝ խիստ անձկոտ արտայայտութեամբ մը :

— Կ'երազես . . . մա՛րդ չեմ տեսներ :

Ես ալ հեռուն գիտեցի , բայց ի զուր . ոչ մէկ բան կը տեսնուէր որ նաւակի մը նմանէր : Տասը վայրկեան անցաւ . . . և յանկարծ բարձրաբերձ ալիքներուն մէջ սեւ կէտ մը երեւցաւ , որ մերթ կը խոչորնար՝ մերթ կը պղտիկնար : Նաւակն էր , երբեմն ալիքներուն կատարը բարձրանալով , յետոյ մինչև խորը իջնելով շարունակ ծովափին կը մօտենար : Վարպետ նաւավար ըլլալու է մարդ

որ իր անձը վտանգի դնէ ծովեզերքէն քսան վերադ հեռու , ամբարտակներուն մէջ , և ան ալ այս տեսակ գիշերով , Եանքօ անշուշտ շատ զօրաւոր պատճառէ մը պէտք է մղուած ըլլար : Այս խորհրդածութիւնները ընելով հանդերձ՝ սրտի ակամայ սեղմումով մը կը հետեւէի վտանգի մատնուած նաւակին շարժումներուն . . . կը տեսնէի թէ ինչ պէս ան մէկէն կը սուզուէր ջրային թռչունի մը պէս , յետոյ նորէն դուրս կը ցցուէր թիւերու օգնութեամբ , որոնք դեւերու երեւոյթը կուտային իրեն , ու կ'օրօրուէր անդունդին վրայ փրփուրէ ալիքներուն մէջ . վայրկեան մը կարծեցի թէ հիմա ծովափին պիտի զարնուի ու փրուի . . . բայց ան թեթեւօրէն սահեցաւ ժայռի մը խռովին առջէն ու խորշիկի մը մէջ մտաւ անվտանգ :

Միջահասակ մարդ մը մէջէն դուրս ելաւ , ոչխարի մորթէ գդակ մը դրած գլուխը . իր ձեռքի նշանին վրայ՝ երեքն ալ նաւակէն բաներ մը դուրս հանել սկսան , զորս չկրցայ սակայն որոշել : Բեռը այնքան շատ էր որ չէի կրնար ըմբռնել թէ ինչպէ՛ս նաւակը չէր ընկղմած : Յետոյ իւրաքանչիւրը մէյ մէկ ծրար առաւ կռնակը ու ծովափին երկայնքէն սահեցան . . . քիչ ետքը ա՛լ մարդ չտեսայ : Պէտք էր որ հիւղակ վերադառնալի բայց այս ամէնքը միտքս այնչափ կանխագրաւեցին որ լուանալուն սպասեցի անհամբեր :

Խաղախա երբ արթնցաւ՝ զարմացաւ զիս հագուած գտնելով . բայց բան մը չըսի իրեն ու նանակորիի ամրոցը գացի հրամանատարէն մեկնումի ժամս հասկնալու համար : Դուրսը , առտուն հիանալի էր . երկինքի կապոյտը թեթեւ ու թափանցիկ գոլորշիներով գեղեցիկնուած էր . հեռուն , իյրիմի ծովափը կ'երկարէր ծովուն մէջ՝ ցից գառիվերով մը վերջանալով , որուն գագաթը աշտարակը կը բարձրանար :

Աւա՛ղ . հրամանատարը ստոյգ բան մը չկրցաւ ըսել այս մասին : Խարսխուած նաւերէն ոմանք եզերապահ են եղեր , ուրիշներ վաճառականի նաւեր և բեռի կըսպասէին : — «Բայց , ըսաւ հրամանատարը , թղթատար — յոգենաւր պիտի գայ երեք չորս օրէն :

այն ատեն դիւրին է»։ — Տխուր ու սրտենդ՝
տուն դարձայ. խազախս դէմս ելաւ բոլո-
րովին խռովուած դէմքով մը։

— Թող ներէ Ձեր Ազնուութիւնը, այսպէս
գործերնիս ձախող կերթայ, ըսաւ, մինչ ներս
կը մտնէի։

— Շիտակը ես ալ չեմ գիտեր թէ ե՛րբ
պիտի մեկնի՞նք հոսկէ։

Այս խօսքերը իր խռովութիւնը աւելի
մեծցուցին... Ինծի մօտեցաւ ու ըսաւ ցած
ձայնով մը. — «Հոս լաւ անդ չէ, այսօր վե-
րակացուի մը հանդիպեցայ որ տեղացի է
եղբր և զոր ես կը ճանչնամ վաղուց։ Անց-
եալ տարի կը պաշտօնավարէր։ Երբ իրեն
յայտնեցի թէ ո՛ւր կը բնակինք... սիրելիս,
պատասխանեց, վայրը կասկածելի է... մաք-
սանդներ են անոնք։ Եւ իրաւ ալ
ճիշդ է. այս կոյրը... մինակը ամէն տեղ
կ'երթայ. հաց կը բերէ, ջուր կը բերէ, շու-
կայ կերթայ... կ'երեւայ թէ հոս տեղի սո-
վորութիւնն է։

— Բայց ըսէ տեսնեմ, տանտիրուհին մէջ-
տեղ ելաւ։

— Այսօր ձեր բացակայութեան միջոցին
պառաւ կին մը եկաւ աղջկան հետ։

— Ո՛ր աղջկան վրայ կը խօսիս. ան աղ-
ջիկ չունի։

— Աստուած գիտէ թէ ինչն է... այո, ...
սա միայն ստոյգ է որ պառաւը ներսն է հիմա։
Խրճիթը մտայ։ Լաւ կրակ մը կը վառէր
վառարանին մէջ ուր ձոխ կերակուր մը կը
պտտաւտէին ասպնջականներս, հակառակ
իրենց աղքատիկ վիճակին։

Բոլոր հարցումներուս պառաւը կը պա-
տասխանէր թէ խուլ է։ Վերջապէս բան մը
չկրցայ իմանալ պառաւէն, ուստի կոյրին
կողմը դարձայ, որ վառարանին քով նստած
էր թուփեր կը նետէր մէջը։

— Բէզի սատանայի ձագ, ըսի ականջէն
բռնելով, պիտի ըսե՛ս. թէ ուր թափառեցար
այս գիշեր ծրարովդ. հէ՛, խօսէ տեսնեմ...

Տղան սկսաւ լալ ու հեծկտալ.

— Ես ծրարով տեղ մըն ալ չեմ եղած...
Ինչ ծրար է այդ։

Պառաւը որ այս անգամ կ'երեւի թէ լաւ
լսած էր, սկսաւ մրթմրթալ.

— Ահա թէ ի՛նչեր կ'ընեն... ելնել ու
խեղճ տղու մը վրայ յարձակիլ... Ի՛նչ կու-
ղէք իրմէ, ի՛նչ ըրաւ ձեզի ան։

Այս կատակերգութիւնը կը ձանձրացնէր
զիս, դուրս ելայ, որոշելով լուծել այս ա-
ռեղծուածը։

Պունկախ մէջ փաթթուեցայ և ցանկա-
պատին քով քարի մը վրայ նստայ։ Առջիս
ծովը կը տարածուէր որ տակաւին չէր հան-
դարտած բոլորովին՝ գիշերուան մրրիկէն.
Իր ալիքներուն միօրինակ աղմուկները՝ որ
հանգչելու վրայ եղող քաղաքի մը վերջին
մըմունջներուն կը նմանէին՝ ինծի հին յի-
շատակներ բերին և զիս հիւսիսի մեր ցուրտ
մայրաքաղաքին գրկը փոխադրեցին։ Երազ-
ներու մէջ թաղուած՝ ամէն բան մոռցայ...
Թերեւս ժամ մը, թերեւս ժամէ մը աւելի
անցուցի այդպէս։ Յանկարծ ներդաշնակ
եղանակի մը չեչտերը հասան ականջիս։ Կնոջ
մը ձայնն էր, թարմ, ախորժելի հնչունու-
թիւնով օծուն ձայն մը։ Ո՛ւրիշ կուգային
արդեօք։ Ուշադրութիւնս կրկնապատկեցի.
նօթերը շատ ճիշդ էին եւ երբեմն տիրու-
թիւն, յետոյ թեթեւ ու ալիսոյժ դգացումներ
կ'արտայայտէին։ Ի զուր չուրջս կը դիտեմ...
մարդ չկայ։ Նորէն մտիկ կ'ընեմ. ինծի կը
թուի թէ ձայնը երկինքէն կ'իջնէ։ Վերջա-
պէս երբ աչքերս վեր կը վերցնեմ, տեսկին
տանիքին վրայ դեռատի աղջիկ մը կը նըշ-
մարեմ, որ կտաւէ շրջադգեստ մը հագած էր
և իր մազերուն հիւսկէնները պուլակ պու-
լակ ուսերն ի վար կ'իջնէին։

Երեւակայէ ջրածին յաւերժահարս մը,
մեր դիցաբանական օրերուն ռուսալքանե-
րէն մէկը։

Մէկ ձեռքով աչքերը արեւին խողտեցու-
ցիչ ճառագայթներուն դէմ պաշտպանելով՝
հեռուն կը դիտէր ուշադիր, երբեմն ինքնի-
րեն խնդալով, յետոյ վերստին շարունակե-
լով երգել։

Ինծի կուգայ թէ այս ձայնը երէկ ալ
լսեցի, և թէ միեւնոյնն էր. մինչ ասոր
վրայ կը խորհէի, դեռատի աղջիկը մէջտե-
ղէն աներեւութացած էր։ Ի՛նչ ետք ան իմ
քովս վաղեց, մըմնելով ուրիշ եղանակ մը.

յետոյ, մատուրներով ծափ զարնելով՝ պառաւին քով դնաց։ Այն ատեն երկուքին մէջ կռիւ մըն է սկսաւ։ Պառաւը կը բարկանար անոր երեսին, և դեռատի աղջիկը քահ քահ կը խնդար։ Յետոյ խայտալով՝ ետ դարձաւ և սկսաւ քովէս քալել։ անգամ մը կեցաւ ու աչքերուս մէջ դիտեց, կարծես իմ ներկայութենէս զարմացած և վերջապէս յանկարծ դարձաւ ու յամր քայլերով դէպի աւազուտ ծովափ դառաւ։

Գրեթէ մինչև իրիկուն խրճիթին շուրջը դառնալէն զատ բան չըրաւ։ Զարմանալի արարած։ Իր դիմագծերը մտազարուածն ոչ մէկ հետք կ'արտայայտէին. ընդհակառակը, համարձակօրէն իմ վրաս յառած էր իր թափանցող, հարցափորձող աչուրները որ մագնիսական զօրութեամբ մը օժտուած կը թուէին։ Բայց հազիւ թէ խօսք մը կ'ուզէի ուղղել իրեն՝ ան մէկէն կը խուսափէր չարածի ժպիտով մը։

Այս տեսակ կին մը երբեք տեսած չէի։ Ան հեռու էր կատարեալ գեղեցկութիւն մը ըլլալէ, և ես գեղեցկութեան մասին ինծի յատուկ դադափարներ ունիմ։ Բայց ան տոհմիկ էր։ Կիններուն համար ալ, ինչպէս ձիւրուն, ցեղը մեծ կարեւորութիւն ունի. ասիկա գիւտ մըն է զոր երիտասարդ Ֆրանսայի կը պարտինք։ Ազնիւ ցեղ մը մասնաւորապէս կը յայտնուի քալուածքին, օտքերուն, ձեռներուն ձեւաւորութեանը մէջ։

Իմ ջրանոյլ երգչուհիս հազիւ տասնըութը տարեկան կը թուէր։ Իր հասակը տարօրինակօրէն ճկուն, իր գլուխը որ միայն իրեն յատուկ կացքով մը կը ծռէր, իր ուսերն ու վիզը թեթեւօրէն թխացած, իր բարեձև ունդունքը, այդ ամէնքը զիս կը դիւրեցին։ Իր անուղղակի նայուածքներուն մէջ երկար դիտեցի գտնելու վայրենի, կասկածելի ինչ մը, և իր ծիծաղներուն մէջ բռնութիւն մը. նախապաշարովը կը յաղթանակէր։ Ինծի կը թուէր թէ Կէօթէի Մինեօնն էր ան, գերման երեւակայութեան այդ մտածին արարածը... Եւ իրաւ ալ, այս երկու արարածները զարմանալի կերպով իրարու կը նմանէին. մէկն ու միւսը յանկարծ կ'անարժանային և յետոյ

անմիջապէս զուարթ ու ուտոստուն կը դառնային. երկուքին խօսքերն ալ հաւասարապէս առեղծուածային էին ու երգերը տարօրինակ։

Իրիկուն, վերջապէս դրան մօտ կեցուցի զինքը ու հարցափորձեցի.

— Ըսէ տեսնեմ, սիրուն աղջիկ, ինչ կընէիր տանիքին վրայ այսօր։

— Կը դիտէի թէ հովը ո՞ր կողմէն կը փչէ։

— Եւ ինչո՞ւ համար։

— Որովհետեւ երջանկութիւնն ալ նոյն կողմէն կուգայ։

— Երգելով է որ երջանկութիւն կը կանչես։

— Հոն ուր կերգեն՝ հոն երջանիկ են մարդիկ։

— Իսկ տխրութիւնը. ան իր երգը չունի։

— Երբեմն լաւագոյն, երբեմն յոռեգոյն, յաճախ ալ լաւէն դէպի յոռին քայլ մը կայ։

— Ո՞վ սովորեցուց քեզի այս երգը։

— Ոչ ոք... Ինքնիրեն կուգայ և ես ալ կ'երգեմ։ Ան որ պէտք է հասկնայ զիս, կը հասկնայ... ուրիշները զիս չեն հասկնար։

— Ինչ է անունդ...

— Ատիկա կնքահօրս հարցուր։

— Եւ ո՞վ է քու կնքահայրդ։

— Այդ ես միայն գիտեմ։

— Բայց գիտցիր որ բաւական բան գիտեմ քու վրադ։

Իր դիմագծերը չփոխուեցան, ոչ իսկ չրթունքները դողացին. կարծես թէ խօսքը իր վրայ չէր դառնար. — «Այս գիշեր ծովափը դուն չէիր. հէ՛» — և սկսայ մանրամասնաբար պատմել այն ամէնքը որոնց ականատես եղած էի։

Բնա՛ւ չփոխեցաւ, կարծես ինք տեղեկութիւն չունենար տոռնցմէ, և ընդհակառակը, սկսաւ կոկորդալիլ խնդալ։

— Բաւական բան տեսեր ես եղբ, բայց նորէն մեծ բան մը չէ գիտցածդ, և եթէ կուզես որ քեզի խորհուրդ մը տամ՝ զիտցած քիչ մը բանդ քեզի պահէ ու մի՛տարածայնեց։

— Եւ եթէ այս բոլորը հրամանատարին պատմեմ, շարունակեցի լուրջ ու նոյն իսկ խիստ չնչտով մը։

Աղջիկը սկսաւ ուստոստել ու երգել և յանկարծ անհետացաւ ահաբեկած թռչնիկի մը պէս: Իրաւ ալ իմ վերջին սպառնալիքս քիչ մը չափազանց եղաւ, վերջէն պատճառներ ունեցայ ես ալ զղջալու ըրածիս վրայ:

Մութը կոխած էր արդէն. խաղախիս պատուիրեցի որ թէյին ջուրը կրակը դնէ, իսկ ես ճրագը վառեցի ու ճամբորդի ծխափողս առի: Արդէն երկրորդ գաւաթը կը խմէի, երբ աղմուկ մը լսեցի դրան առջին և շրջագետի մը շրջիւնը ականջիս հասաւ. ցնցումով մը ետիս դարձայ. . . իմ ջրանոյշս էր. ներս մտաւ ու ճիշդ դէմս նստաւ յամբարար, առանց բառ մը արտասանելու: Աշուրները որոնք իմ վրայ յառած էին, գորովով լեցուն նայուածքի մը տպաւորութիւնը կը գործէին և ինծի կը յիշեցնէին երբեմնի նայուածքները որոնք անցեալին մէջ այնքան զորաւոր կ'ազդէին իմ հոգիին: Ինծի թուեցաւ թէ պատասխանի մը կըստաւ, բայց ես լուռ մնացի և տրամադրութիւն չէի զգար ոչ մէկ բան խօսելու: Իր դէմքը որ տոգոյն էր, սաստիկ մտահոգութիւն մը կը մտնէր: Առանց նպատակի իր ձեռքը սեղանին վրայ կը պտտցնէր և ես կրցայ նշմարել որ թեթեւօրէն կը դողդղար: Երբեմն իր կուրծքը կը բարձրանար, երբեմն կարծես թէ չնչառութիւնը կընդհատուէր:

Վերջապէս սկսայ ձանձրանալ այս կատակերգութենէն, ուղեցի առանց այլ ընդալի խզել լուռութիւնը, և գաւաթ մը թէյ տալ իրեն, երբ յանկարծ իմ վրաս խոյացաւ, թեւերը վզիս շուրջը փաթեց, և չրթունքներու վրայ հրայրքոտ համբոյր մը զգացի: Աչքերս մթազնեցան, գլուխս դարձաւ, և թեւերուս մէջ սեղմեցի զինքը. բայց օձի մը պէս ցատկեց գրկէս, և ականջս ի վար, ըսաւ. — «Այս գիշեր երբ ամէնքը պառկին, ծովափը եկուր, կըսպասեմ քեզի»: Եւ սենեակէն դուրս սուրաց նետի մը արագութեամբ:

— Թէյամանն ու ճրագը վար ձգեց... անիծեալ չարաճճին, պօռաց խաղախս որ յարդին վրայ փռուած թէյին մնացորդին կը սպասէր՝ ուղեւորով քիչ մը տաքնալ:

Այս բացագանչութեան վրայ ես ալ ինքզինքիս եկայ:

Երկու ժամ վերջ, երբ ամէն բան լռեց, խաղախս արթնցուցի: «Մտի՛կ ըրէ, ըսի իրեն, երբ ատրճանակի հարուած մը լսես, ծովափ վաղէ»: Աչքերը խոշոր բացաւ և ըսաւ մեքենաբար: — «Բաւական է այդչափը, Ձերդ Ազնուութիւնը»: Ատրճանակ մը խոթեցի դօտիս ու դուրս ելայ:

Չառիվայրին գլուխը ինծի կըստաւէր աղջիկը: Սովորականէն աւելի թեթեւ հագուած էր:

— Բալէ՛՛ ետեւէս, ըսաւ, ձեռքէս բռնելով, և զառիվայրն ի վար իջանք:

Չեմ գիտեր թէ ի՞նչ ըսելով գացի ետեւէն: Աջ կողմը դարձանք և նոյն ճամբէն քալեցինք ուրկէ անցեր էի առջի գիշերը՝ կոյրը գիտելու համար: Լուսինը դեռ չէր բարձրացած. միայն երկու լուսատուներ, պաշտպան փարոսներու պէս, երկնքի մթազոյն կապոյտին վրայ կը փայլէին: Ծանր ալիքներ կանոնաւոր ընդհատումներով իրարու կը յարդէին, և հազիւ կրնային շարժել մինաւ կուկ նաւակ մը որ ծովափը կապուած էր:

— Ահա՛ նաւակ, մէջը մտնենք, ըսաւ ընկերուհիս:

Կը վարանէի... ծովու վրայ զգայական պտոյտ մը շիտակը այդ պահուն հազիւ թէ կը հրապուրէր զիս. բայց վարանելու ճար չկար: Ան ցատքեց նաւակին մէջ և ես իրեն հետեւեցայ առանց մտածելու վայրկեան մը ունենալու: Ու սկսանք թիավարել:

— Ի՞նչ կը նշանակէ այս, ըսի զայրացած շեշտով մը:

— Այս կը նշանակէ... այս կը նշանակէ, ըսաւ նստարանի մը վրայ նստեցնել տալով զիս և բազուկներովը գրկելով, թէ կը սիրեմ քեզ:

Իր այտը իմինիս վրայ զգացի, և իր շունչը կ'այրէր դէմքս: Յանկարծ ծովուն մէջ բան մը ինկաւ աղմուկով, ձեռքս դօտիս տարի... ատրճանակս չկար: Այն ատեն ահարկու կ'ասկած մը արթնցաւ մտքիս մէջ. . . բոլոր արիւնս գլուխս խուժեց... ի դուր շուրջս դիտեցի, վաթսուն ձողաչափ եղեր:

քէն հեռացեր էինք, և ես լողալ չգիտէի: Կը փորձեմ հեռացնել զինքը ինէ, բայց ան կատուի մը պէս կը փակի լաթերուս, և յանկարծ ուժգին ցնցում մը քիչ մնաց որ զիս ծովը պիտի ձգէր: Նաւակը կը շրջէր, բայց կը յաջողիմ հաւասարակշռութիւնը պահել նորէն... Եւ յուսահատ կռիւ մը կըսկսի իմ ու իր մէջ: Բարկութիւնը ուժեղացաւ կը բազմապատկէր, բայց քիչ ատենէն հասկցայ թէ հակառակորդս թեթեւաշարժութեան մասին զիս կը գերազանցէր:

— Ի՞նչ կուզես ինէ, կը պօռայի, բոլոր ուժովս սեղմելով իր սիրուն ձեռունները: Իր մատուցները իմ ննքերուս տակ կը ճարճատէին, բայց ձայն ձուն չհանեց... Իր սողունի բնաւորութիւնը կը հանդուրժէր այդ խոշտանգումներուն:

— Դուք տեսն'ր ես մեզ. պատասխանեց... Լո՛ւր պիտի տաս:

Եւ գերբնական ճիգով մը զիս նաւակին եզիրքը ձգեց: Երկուքս ալ մէջքերնէս վեր նաւակէն դուրսն էինք. իր մազերը ջուրին մէջ կը թրջէին... վայրկեանը վճռական էր... ծունկս նաւակին յատակին կռթնցուցի, մէկ ձեռքովս մազերուն հիւսքէն բռնեցի, մինչ միւսովը՝ կոկորդէն կը սեղմէի... հագուստներս թողուց և ես զայն ալիքներուն մէջ նետեցի:

Արդէն բաւական մութ էր... իր գլուխը երկու անգամ երեւցաւ փրփուրներուն մէջ, և ա՛լ բան չտեսայ:

Նաւակին յատակը հին թիակի մը կտորը գտայ որուն շնորհիւ, տաժանելի և երկարատեւ ջանքերէ ետք, վերջապէս ծովեզերք հասայ: Հիւղակ դառնալուս, գրեթէ ակամայ նայեցայ այն տեղը ուր երէկ գիշեր դեռատի կոյրը գիշերային նաւավարին կը սպասէր:

Լուսինը կը փայլէր երկնքին վրայ. ծովափը սպիտակ երեւոյթ մը առած թուեցաւ ինծի: Հետաքրքրուած՝ եզերքին սեպ ցրցուածքին ետին քաշուեցայ ու խոտերուն մէջ տարածուեցայ: Ի՞նչ ետքը երբ մեծ զգուշութեամբ գլուխս վերցուցի, ամէն բան

կրցայ տեսնել: Զարմանալէ աւելի հիացալ ջրածին յաւերժահարսս վերստին գտնելով Ան իր մազերուն երկար հիւսկէնները կը սեղմէր փրփուրները քամելու համար: Իր թրջուած շապիկին տակէն կը գծուէին մարմնին՝ ողորկ ձեւերը: Նոյն պահուն հեռուէն նաւակ մը երեւցաւ: Երէկ գիշերուան պէս նորէն մարդ մը դուրս ելաւ. թաղեայ գլակ մը կը կրէր, բայց մազերը խաղախական ձեւով յարդարուած էին ու գօտիէն երկար դանակ մը կախուած էր,

— Ամէն ինչ կորսուած է, Եանքօ, պօռայ աղջիկը: Եւ երկուքը մէկ սկսան ցած ձայնով խօսիլ, այնպէս որ բան մը կարելի չեղաւ հասկնալ:

— Կո՛յրը ո՛ւր է գացեր, ըսաւ Եանքօ ձայնը բարձրացնելով:

— Տեղ խրկեցի, պատասխանեց աղջիկը: Քիչ ետք կոյրը հասաւ, կռնակը պարկ մը՝ զոր նաւակին մէջ տեղաւորեցին:

— Ականջ դիր ինծի, կո՛յր, ըսաւ Եանքօ: Լաւ պահպանէ այս տեղը... գիտե՛ս, թանկագին ապրանքներ կան հոն: Ինծի համար ըսէ... (անունը չկրցայ լսել) թէ ա՛լ իր ծառայութեանը մէջ չեմ: Ալ զիս չպիտի տեսնայ... Ուրիշ տեղ կերթամ գործ փնտռելու... Եւ ինծի պէս մէկը դժուարաւ պիտի կրնայ ճարել: Ըսէ իրեն որ՝ եթէ զիս աւելի լաւ վարձատրէր, ես զինքը պիտի չձգէի... Ինծի համար ամէն տեղ մէկ է... հոն ուր հովը կը փչէ ու ծովը կը մռնջէ, Եանքօն հոն է:

Պահ մը լռեց, յետոյ վերստին շարունակեց Եանքօ, աղջիկը ցուցնելով.

— Ան ալ ինծի հետ պիտի մեկնի, ան ալ չկրնար մնալ հոս... պառաւէն կ'ըսես որ ան ալ իր պարտքը կատարեց. առ յաւերժ մնաք բարով կըսենք իրեն:

— Իսկ ե՛ս, հարցուց կոյրը վշտագին ձայնով մը:

— Դուք ալ ինչ կուզես ան եղիւր... հոգո՛ւ Մինչ տակաւին այս խօսքերը կըլլային, ջրանոյշս արդէն նաւակին մէջ ցատքած էր՝ նշան ըրաւ իր ընկերօջը որ կոյրին ձեռքէ բան մը կը սահեցնէր, ըսելով.

— Ահա՛ քեզի դրամ, կարկանդակ գնէ՛ :

— Այսչափ, ըսաւ տղան :

— Սա ալ առ... եւ դրամի մը ձայնը հնչեց քարին վրայ ուր ինկաւ :

Կոյրը ձեռք չդպցուց : Եանքօ նաւակ նստաւ . ծովափէն հովը կը փչէր արդէն, Առաքատը բացին, որ անմիջապէս ուռեցաւ, և հեռացան : Երկար ատեն իմ նայուածքս հետեւեցաւ ձերմակ սուաքաստին որ որոշ կերպով կը գծուէր մթագոյն ակիքներուն վրայ... Կոյրը միշտ նստած էր ծովեզրը . և յանկարծ հեծկլտուք մը լսուեցաւ... Խեղճ տղան երկար ատեն լացաւ... ու ես մեղքցայ :

Ինչո՞ւ բաղդը տարած ձգած էր զինքը այս մաքսահէններուն մէջ : Ինչո՞ւ ես ալ ինչայի անոնց մէջ, քարի մը պէս որ վտակի մը յատակը կիյնայ վճիտ ջուրերը պղտորելով :

Բնակարանս դարձայ... ճրագը որ փայտէ սկահակի մը վրայ դրուած էր, մարեղու մօտ էր, և խաղախս, հակառակ իմ հրամաններուս, խոր քունի մէջ կը խորթար, հրացանը երկու ձեռուներովը բռնած : Զուգեցի իր հանգիստը վրդովել, և ճրագը առնելով հիւղակը մտայ... Աւաղ . արկղիկս, արծաթ թելերով հիւսուած գդակս, եւ ուրիշ առարկաներս անհետացած էին : Այն ատեն հասկցայ թէ անիծեալ կոյրին տարած բաները իմօ էին : Քիչ մը խստութեամբ արթնցուցի խաղախս, զայրացած էի... բայց ի՞նչ կրնայի ընել : Չէ՛ մի որ իմ վրաս պիտի խնդային եթէ հրամանատարին հասկցնէի թէ դեռատի կօր մը կողոպտեց զիս, և թէ տասնըութը տարեկան աղջիկ մը զիս պիտի խղդէր : Բարեաղդաբար յաջորդ առտուն կրցանք մեկնել... :

Ահա այսպէս է որ ես ձգեցի Թամանը : Ինչ եղան պառաւն ու կոյրը : Ես ալ չեմ գիտեր : Եւ արդէն ինչ պէտք ունէի հետաքրքրուելու մարդկութեան ցաւերովն ու ուրախութիւններովը :

Լ.ՆՐԱՐՈՆԴՈՎ.

Թարգմ. ՅԱԿՈԲ ՓԱՓԱՋԵԱՆ

ԽՍՏԱԳ ԲԱԿԱՆ ԵՕՐԵՐ

ՍԱԼԻՍԷԻ աստիճան շնորհուեցաւ՝ Տպագրական Տեսչութեան օգնական Վսեմ. Սիսակ Ֆէրիտ պէյի եղբօր՝ Յակոբ Ֆէրիտ էֆ.ի, որ Սիլիվրիի գայմագամի օգնականի պաշտօնը կը վարէ բարեռք կերպով : Կը շնորհաւորենք Յակոբ Ֆէրիտ էֆ.ն՝ Կայսերական բարձր գնահատման արժանանալուն առթիւ, զոր բերկրութեամբ կ'արձանագրենք :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր նոր վերակազմութիւնը ստացած է սապէս. — Նախորդ անդամներէն կը մասնակցին անոր՝ Գէորգ էֆ. Ասլանեան, Միհրան էֆ. Շիրինեան և Վահան էֆ. Սուրէնեան, իսկ նորընտիր անդամներն են՝ Գալուստ Գուլումեան, Զգօն Խօրասանեան, Գրիգոր Մարգարեան և Հանէսեան էֆ.ները : Այս վերջին երկուքը թէև հրաժարական զրկած են, բայց Ս. Պատրիարք Հայրը կրկին հրաւիրած է զանոնք ընդունել անդամակցութիւնը : Նորակազմ Տնտես. Խորհուրդը գումարուելով շարթուս սկիզբը, իր դիւանը ընտրեց. Ատենապետ՝ Գէորգ էֆ. Ասլանեան, դերատենապետ՝ Միհրան էֆ. Շիրինեան և ատենադպիր՝ Զգօն էֆ. Խօրասանեան : Ասլանեան էֆ. տեսութիւն մը ընելով, պարզեց Տնտես. Խորհուրդին պաշտօնին բնութիւնը և օրակարգի վրայ գտնուած հաշուական խնդիրները ներկայացուց որոնք յաջորդաբար նկատողութեան առնուել սկսան :

ԵՐՈՒՍԱԴԵՄԷՆ հասած լուրերու նայելով, — զորս հրատարակեցին օրաթերթերը — Դամասկոսի հոգեւոր տեսուչ Տ. Վահան վրդ. Քէչիչեան՝ որ իր պաշտօնին մէջ կը թերանար, պաշտօնակի եղած է Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին որոշմամբ, ուխտաւորներու կողմէ եղած գանգաւորներու վրայ, և անոր յաջորդ նշանակուել է Տ. Մեսրոպ վրդ. որ Երուսաղեմի վանքին մէջ համարակալի պաշտօն կը վարէր : Իսկ Ս. Ծննդեան (Բեթղեհեմի) տեսուչ նշանակուել է Տ. Արիստակէս վրդ. Խաչատուրեան :

Ֆէրիֆեյլի եկեղեցիին տօնախմբութեան առթիւ, Թաղ. Խորհուրդին հրաւերով՝ Ս. Պատրիարքը պատարագեց ու քարոզեց անցեալ կիրակի, երկուսն հաւատացեալներու խումուն բազմութեան ներկայութեամբ։ Ն. Ամենապատուութիւնը, այս հանդիսաւոր առթիւ, թէ՛ եկեղեցւոյ բակին մէջ ուր առաջնորդուեցաւ թափօրով, թէ՛ և յետոյ, վարժարանին մէջ տրուած սեղանին վրայ որուն կը նախագահէր, ջերմագին բարեմաղթութիւններ ըրաւ Վեհ. Կայսեր արեւշատութեան համար, որոնց ձայնակցեցան բոլոր ներկաները։

Այս տօնախմբութիւնը առիթ կընծայէր արժանաւոր յարգանք մը նուիրելու Վսեմ. Զենոբ պէյ Մէրհամէթճեանի որ, ինչպէս յայտնի է, ինքնաբերաբար նախաձեռնութիւնն ստանձնեց այդ հին ու խարխուլ եկեղեցիին ու յարակից դպրոցին վերաշինութեանը, դրամապէս սատարելով անոր լայնօրէն, և հոգածու գտնուելով անոնց շէնութեանը և ներքին կարգուսարքին, իբրեւ ատենապետ Թաղ. Խորհուրդին, իր պաշտօնակիցներուն հետ։ Այսօր, Ֆէրիֆեյլի եկեղեցին ու դպրոցը, կատարելապէս նորոգուած՝ կոկիկ ու սիրուն երեւոյթ մը ունին, և յոյս կայ որ, դարձեալ Զենոբ պէյի ջերմօրէն բարեսիրութեան շնորհիւ, աւելի ընդարձակութիւն եկեղեցին, գոհացում տալու համար թաղին բնակչութեան հետզհետէ բազմանալով՝ անոր հոգեւոր պէտքերուն։ Ս. Պատրիարք Հայրը իր քարոզին մէջ պատաշաճապէս շեշտեց այս պարագաները, խոսելով մեր նախնեաց ջանքերուն ու նպաստներուն վրայ՝ տաճարներու և կրթական յարկերու կառուցման համար։ Սեղանին վրայ ևս, Ն. Ամենապատուութիւնը տեսութիւն մը ընելով թաղային գործերուն ու անոնց մատակարարութեանը վրայ, գովեստով յիշեց Թաղ. Խորհուրդին, և ի մասնաւորի անոր ատենապետ պէյին, և դպրաց դասուն աշխատութիւնները։

Զվիրաւորելու համար Զենոբ պէյի համեստութիւնը, կը բաւականանանք այս հա-

կիրճ յիշատակութեամբ։ Բարեգործութիւն մը միշտ պերճախօս է ինքնին, և խորհրդածութեան պէտք չթողուր։ Կը մաղթենք միայն որ եկեղեցին ընդարձակելու խորհուրդն ալ իրականանայ։

Կ'արժէ յիշել նաև, — քանի որ Ֆէրիֆեյլի եկեղեցիով կըզբաղինք, — թէ նորոգուած են նաև Թաղ. Խորհրդարանը և քահանայից ու պաշտօնէից խուցերը, և եկեղեցւոյ արտաքին դրան երկու կողմի չորս խանութները, որոնց հասոյթը չէր համապատասխաներ եղած ծախքերուն, Թաղ. Խորհուրդին որոշմամբ փլցուելով, միացուած են վարժարանին։ Այս վերջին նորոգութեանց համար միայն Զենոբ պէյ նուիրած է 60 ոսկի, և 30 ոսկիի մօտ գումար մըն ալ հայթայթած է Թաղ. Խորհուրդը։

Gavroche—Polka

Վաղուան Նուագահանդէսին առթիւ այժմէութիւն մը կընծայէ նոր հրատարակուած այս ուսոստուն ու կայթահարաւէր Բօլքան, Թ. Սինանեանի հեղինակութեամբ և ձօնուած... «Կալօչ»ին—Երուանդ Թօլայանին—որուն պատկերն ալ նկարուած է ձայնատետրին կողքին վրայ։ Այդ կողքը՝ ինքնին՝ գեղարուեստական գործ մըն է, Թ. Ակայեանի կողմէ նկարուած։ Այնպէս որ, զայն իրենց դաշնակին առջև ունեցողները՝ երաժշտութիւնը ու նկարչութիւնը ներդաշնակօրէն միացած պիտի գտնեն հոն, եղանակին զուարթութեանը հետ զուարթ տպաւորութիւն մըն ալ կրելով ի տես «միմոսաիան» դիմագծերուն երիտասարդ երգիծաբանին, որ Մասիսի գրական ու գիտական լուրջ նիւթերուն մէջտեղ իր note gaiete պիտի գայ խառնել այսուհետեւ, իր «Օրուան դէպքեր»-Օրուան դէպքեր»ովը։

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Տէր եւ Տնօրէն—ՏՈՒՔԹ. ԵՂՈՒԱՐԴ. ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱՔ Փրագրի



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20-ի Կայս. Ուկրաինական արտոնում

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի

ՀՐԴԵՀ, ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄՆԵՐՈՒ ԴԵՄ,

ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կատարելուն դէմ:

Ընկերութեան դրամագումար, ամբողջակէս վճարուած

10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 *

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամա-

գումար եւ վնասուց հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ագորհեան

10-10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԵԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հէրճայի վաճառատունը՝ գտնարեղէններու, սպիւր եւ արծաթ շքաներու, գորգերու, պարթեւ եւ քոչոյի ժամացուցներու մասնաւոր վաճառումէն զատ, իր բազմաթիւ լաւագործութիւններէն քաջալերուած՝ այս անգամ կը փութայ յայտարարել թէ ամէն եղանակի լաւակի վերջին նորաձեւութեան վրայ պատշաճ ունի արտադրած, հասանելի եւ ազատաց համար ամէն տեսակ հագուածներ ու առձեռնի համար մաշակաւ վերարդեւներ, նաեւ ձերմակեղէններ, ֆանթեզիներ եւ թօսֆիներ ու ամերիկեան հօլիվուդեր: Ունի նաեւ կահաւորութիւն, ձեղունի լամպաներ, ժամակալներ, եւրոպական ու ամերիկեան գորգեր, գետնի մաշակաւներ, կրամօֆօններ ու պիտիքլեթներ՝ ամենավերջին կատարելութիւններով:

Հէրճայի վաճառատունը իրականացէս ու լայնօրէն շահած է հանրութեան վստահութիւնը եւ գոհունակութիւնը իր ապրանքներուն ազնուութեան եւ սպիտակութեան, ձեւաւորութեան եւ ամենակատար օգտագործման համար:

Այս ամէնուն արդեաւ արժէքին վաճառումն է

ԱՊԱՌԱՆՈՒՄ

Միայն թէ գնումը ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկ մնացեալ գումարին համար շարժադրութեան հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հալթայթել:

Վաճառատունն հաստատուած է

ՄԵՄ-ՇՈՒԿԱՅ, ՈՍԿԵՐԶԱՅ ՄԵՄ ՓՈՂՈՅ ԹԻՒ 13

Անգամ մը արեւելի բաւական է համազարեւել համար թէ՛ Հէրճայի անցանի կողմէն կերպար թեւամբ մը ի վիճակի է այսօր գոհունակ, իր ամէնէն դժուարեան լաւագործները: Կանխիկ գնողներու ցամաք հարիւրին 5 զեղչ:

Սակարկութիւն չկայ:

Շարժադրութեան վճարմանը համար հաւանքները միշտ պատրաստ են:

10-10

ՆԱԶԱՐԷԹ ԽԱՉԻՐԵԱՆ

ՓԱՍՏԱՌԱՆ

Պոլիս, Մարտունեցիք, Պարսկաստան խան
Թիւ 26

Այն կորդի դասեր կը ստանանէ եւ
խնդրոյ առարկայ եղած շորձերու համար
թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ
բանակցութիւններ կը կաւարէ եւ կործինք
կը յայտնէ, կը խմբագրէ եւ կը թարգմանէ
դասերու եւ առեւտրական ու սովորական
պայմանագրութեանց վերաբերող թուղթեր:
Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր միայն
բար խորհրդակցութիւն կը կաւարէ եւ կոր-
ծինք կը յայտնէ:

Ապակովագրական գործառնութիւններու
եւ ի մասնաւորի կեանքի ապակովագրական
ընկերութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող
տեղեկութիւնները միայնքաւ կուտայ:

Կը յանձնարարէ որ մինչեւ որ այս մասին կա-
րեւոր եղած տեղեկութիւնները իրմէ չստաց-
ուին, ապակովագրութիւն չի ստորագրուի:
Ապակովագրական միասնաց հասուցման գու-
մարներու եւ փոխարժէքներու գանձում-
ներ կը ստանանէ:

7—10


Դ Ե Ր Ձ Ա Կ

Վ Ի Չ Ե Ն Ա Լ Ա Ճ Ա Ե Ա Ն

Ղալաթիա, Հաբանք փողոց. Թիւ 13

Լաւ տեսնի կերպարներով ու ձեւաւ որ
հազուադէպ պարտաւել առաւելները, ու-
րոնք միանգամայն ուժանութիւն կը փնա-
րեն եւ վճարման դիւրին պայմաններ, հրա-
նան դիմել այս նոր բացուած խանութը, եւ
մեծապէս գոհ պիտի մնան:

7—10



Անկարելի է որ ընտանիք մը փոքանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ զժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռ Բի, ուսի ու ուսի եւ ձեռ Բի միանգամայն մեկնանք կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ։

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎԱՅԱՐԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ

- 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
- 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Ղիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

- 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
- 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊԱԼԻՍ

- 1. Սուլթան Համամ, Թ.
- 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԱԻԻՏԱՐ

Չարը Պօլու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երաւիսաւորութիւն։

Մասնահիւղեր գաւառաց բոլոր ֆալսիներուն մէջ։

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը։

10—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ. ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկօր տարիներէ ի վեր կը դարմանէ ուսումնասիր, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին եւ նոր դաշտկան թիւերը։ Այս վերջին թիւերը՝ առանց ուսումնասիր խանգարման եւ նարագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ։

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը, Զօրեթշարթի օրերը միայն ձրի։ 10—10

ԱՂԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Արանց եւ կռնանց ճաշակաւոր հովանոցներու, Պօլիս, Սուլթան—Համամ, Միւրիլի Դարմատան դէմ թիւ 58։

Սոյն վաճառատան մէջ գտնուած ազգայնէրը, օրանց ու կռնանց յառուկ հովանոցներ, իրենց գեղեցիկութեան կը միջոցեն անհաւատութիւն, եւ դիւրամտալիքի գիւնդու առուկութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան։

Աղամ վարդեան մեծապէս գոհ թողուն ցած է իր բազմաթիւ յաճութիւնները։ 10—10